

ծախք, և աշակերտք Վարժարան ընդունուելու ատեն իսկ բերելու չեն իրենց հետ ու է իրեղէն:

10. Ցերեկօթիներու տարեկան վճարը կպարունակէ միայն ուսումնական ծախքերը և ցերեկուան ճաշը:

11. Ցերեկօթիկներու զգեստը ծնողք հոգալու են Վարժարանի համազգեստին համաձայն:

12. Աշակերտները Նախակրթարանի կամ Կրթարանի ընթացքը սկսելէն վերջը պարտաւոր են շարունակել զայն մինչև ցաւարտ:

13. Եթէ տարուան ընթացքում աշակերտը հիւանդութեան կամ ուրիշ որ և է ստիպողական պատճառով բացակայ լինի Վարժարանէն, տրուած տարեկան վճարը չկրնար յետ պահանջուիլ ծնողքի կողմէն:

14. Վարժարանին երկամսեայ արձակուրդին, որ տեղի կունենայ Յուլիս և Օգոստոս ամիսներում, ծնողք, եթէ ուզեն, կարող են տուն տանիլ իրենց զաւակները, բայց երթևեկութեան ծախքը իրենց վրայ է: Իսկ Վարժարանում մնացողներուն համար յատուկ վճար չպահանջուիր:

15. Աշակերտ տալ ցանկացողները ըստ կարելոյն կանուխ ծանուցանելու են իրենց որոշումը Վարժարանի Տեսչութեան:

Կարին Մայիս 1885

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐՎԱՐԱՆԻ

Վարժարանին վերաբերեալ նամակներ ուղղուելու են:

Ա.Ս. Տեսչութիւն Սանասարեան Վարժարանի ի ԿՈՐԻՆ.

ارض و صمده ساناساريان مكتبي نظارته

Direction du Collège Sanassarean — ERZEROUM, Turquie d'Asie.

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ.

Առաջիկայ Օգոստոս 1/20 Յուլիսին, ԱՐՄԷՆԻԱ անուն հայերէն մի լրագիր պիտի հրատարակուի Մարտէլի մէջ, շտաբին երկու անգամ, համարատուութեամբ: Ֆէլիքս Անֆանդէնի և խմբագրութեամբ Մ. Փորթուգալեանի, տարեկան բաժանորդագինն է 10 րուբլ. թղթագրամ: Խմբագրութիւնն ինք կը վճարէ ժողովրդական ծախքը:

ԱՐՄԷՆԻԱԻ շրջաբերական Յայտարարութիւնը Յրեապէս կը զրկուի եթէ ցանկացող լինի իմանալու այդ լրագրի նպատակը, ուղղութիւնը և սլայմանները: Կարելի է դիմել խմբագրութեանը, ֆրանսերէն հետեւեալ հասցէով. M. Portoukalian, Rédacteur du journal ARMENIE, rue Arménie, 2 (Hôtel Forer), MARSEILLE (France),